



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 05-Ա

### ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 02 նիստի օրակարգը.

1. Թիվ 02 նիստի օրակարգը հաստատելու մասին.
2. Համայնքի քնակիչներին դրամական օգնություն ցուցաբերելու մասին
3. Բազում համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 06-ի թիվ 23-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4. Բազում համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 31-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
5. 06-023-0240-0007 ծածկագրի հողամասն աճուրդ վաճառքով օտարելու մասին
6. 06-023-0234-0058 ծածկագրի հողամասն աճուրդ վաճառքով օտարելու մասին
7. Բազում համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրերի իրականացման հաշվետվությունների մասին

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԿԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ  
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 06-Ա

**ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թ-ի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ Բազում համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 31-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -4

Դեմ -0

Չեղնակա հ -0

ԱՎԱԿԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՇԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ՍՐԲՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**




ՀՀ ԼՈՌՈՒՄ ԿՐԹՈՒՄ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<<26>>02.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 06-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒՄ ԿՐԹՈՒՄ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՒՑ  
ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՅՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Հովհաննիսյան Արմեն Ռաֆայելի - /30000/ երեսուն հազար դրամ/ ՀՀ դրամ
2. Խաչատրյան Գևորգ Մովսեսի - /30000/ երեսուն հազար դրամ/ ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ  Ա ՊԼՈՒՋՅԱՆ



ՑՈՒՑԱԿ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ  
/ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵՒԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ/

1. Գևորգյան Հայկուհի Կամոյի - /10000/ տաս հազար դրամ/ ՀՀ դրամ
2. Կարապետյան Անահիտ Անդրանիկի - /10000/ տաս հազար դրամ/ ՀՀ դրամ
3. Սարանյան Գայանե Մայրտակի - /10000/ տաս հազար դրամ/ ՀՀ դրամ
4. Ղումաշյան Լիլիթ Վարդանի - /5000/ հինգ հազար դրամ/ ՀՀ դրամ
5. Մանջիկյան Մարինե Սամվելի - /5000/ հինգ հազար դրամ/ ՀՀ դրամ
6. Գալստյան Նարինե Սանասարի - /15000/ տասնհինգ հազար դրամ/ ՀՀ դրամ
7. Բարայան Աիդա Գարեգինի - /15000/ տասնհինգ հազար դրամ/ ՀՀ դրամ
8. Հովհաննիսյան Հեղինե Սերժիկի - /15000/ տասնհինգ հազար դրամ/ ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա ՂՆՈՒԶՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 07-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի  
ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

2014 թվականի նոյեմբերի 6-ի «Բազում համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նկատմամբ ՀՀ քաղաքացիների սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 23-Ա որոշման մեջ «Ծառույցյան Հարություն» քառերը փոխարինել «Ալբերտ Հարությունի Ծառույցյան» բառերով:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 08-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Ուժը կորցրած ճանաչել Բազում համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 16-ի «06-023-0234-0058 ծածկագրի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդ վաճառքով օտարելու մասին» թիվ 31-Ա որոշումը:

Կողմ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍՐԲՈՒՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 09-Ա

06-023-0240-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Բազում համայնքի 06-023-0240-0007 ծածկագրի 0,13108 հա վարելահողն աճուրդ վաճառքով օտարելու:

Մեկնարկային գինը սահմանել 222700 ՀՀ դրամ:

Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով 11140 ՀՀ դրամ:

Նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով 11140 ՀՀ դրամ:

Մասնակցության վճարը սահմանել 2000 դրամ:

Աճուրդը կազմակերպելու մասին տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն թերթում:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԿԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՈԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 10-Ա

06-023-0234-0058 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Բազում համայնքի 06-023-0234-0058 ծածկագրի 0,00517 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն աճուրդ վաճառքով օտարելու:

Մեկնարկային գինը սահմանել 28100 ՀՀ դրամ:

Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով՝ 1410 ՀՀ դրամ:

Նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5% չափով 1410 ՀՀ դրամ:

Մասնակցության վճարը սահմանել 2000 դրամ:

Աճուրդը կազմակերպելու մասին տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն թերթում:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԿԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՎԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ







## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.iori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 11-Ա

ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ  
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական հնքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Բազում համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան և համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԿԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՍ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍՐԲՈՒՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Բազում համայնքը հնագույն բնակավայր է: Այն տեղակայված է Բազումի լեռների ստորոտուի հյուսիս արևելյան մասում, մարզկենտրոն Վանաձորից 8կմ հեռավորության վրա: Շրջապատված է Բազումի լեռներով, ծովի մակերևույթից բարձր է 1550մ:

<i>Վարչական տարածքը հա</i>	<i>Գյուղնշանակության հողատարածք հա</i>	<i>վարելահող հա</i>	<i>խոտհարք հա</i>	<i>արոտ հա</i>	<i>այլ հա</i>
4208,89	2814,58	210,99	373,16	1917,01	313,42

Համայնքն ունի 488 տնտեսություն, 1909 բնակիչ, որից մշտապես ներկա 1346 մարդ /691 տղամարդ, 655 կին/: Համայնքի թոշակատուների թիվը կազմում է 136, նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 53:

Համայնքի աշխատունակ բնակչության թիվը կազմում է 1125 մարդ, որից՝  
 գյուղատնտեսական ինքնազբաղվածություն 420 մարդ  
 պետական մարմիններում 145 մարդ  
 տեղական ինքնակառավարման մարմիններում 10 մարդ  
 մանկապարտեզում 5 մարդ  
 դպրոցում 15 մարդ  
 պայմանագրային զինծառայող 50 մարդ  
 մասնավոր սեկտորում 30 մարդ  
 չունեն զբաղվածություն 671 մարդ:

- 2020թ-ի ընթացքում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը

<i>Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը</i>	<i>Ցանքատարածության չափը</i>	<i>Արտադրանքի քանակը</i>
կարտոֆիլ	9,84հա	750ցենտ.
բանջարեղեն	2.33հա	295ցենտ.
պտուղ	22.24հա	307ցենտ

Համայնքն ունի

<i>Անասնատեսակ</i>	<i>գլխաքանակ</i>
Խոշոր եղջերավոր անասուններ	324 որից 212 կով
Մանր եղջերավոր անասուններ	43
թռչուններ	704
մեղվաբնակարաններ	310

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում է 132 աշակերտ: Դպրոցն ունի 36 աշխատող:
- Համայնքում գործում է նախակրթարան, ուր հաճախում է 5 երեխա:
- Համայնքում գործում է մանկապարտեզ, ուր հաճախում են 20 երեխա:
- Համայնքում գործում է բուժկետ:

Համայնքն ունի մշտապես հասանելի պաշտոնական կայք, որը պարբերաբար թարմացվում է:

Ինչպես այլ համայնքներ, այնպես էլ մեր համայնքն ունի իր ուժեղ և թույլ կողմերը:

Համայնքի թույլ կողմերն են.

Խմելու ջրի բացակայություն

Հողաբաժնի քանակի քչություն

Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ

Ֆինանսական ռեսուրսների բացակայություն

Աշխատատեղերի պակաս

Վաղեմությունն անցած փայտյա երկհարկանի շինությունների առկայություն

Համայնքի ուժեղ կողմերն են.

Բանիմաց աշխատուժի առկայություն

Միջնակարգ դպրոցի առկայություն

Բուժկետի առկայություն

Մանկապարտեզի առկայություն

Հեռահաղորդակցության առկայություն

Գազաֆիկացման առկայություն

Մարզկենտրոնին մոտ լինելը

Համայնքով անցնող Հայաստան-Վրաստան միջպետական ճանապարհ

Անխափան գործող Բազում-Վանաձոր երթուղի /9 երթ/

Փողոցային լուսավորություն

Աղբահանություն

Բարվոք ներհամայնքային ճանապարհներ

Բարձրագույն կրթությամբ բավարար աշխատուժ

Ծնելիության աճ

Համայնքի բյուջեն կազմում է 57191,7 մլն դրամ.

որից դոտացիա` 32020,3 մլն դրամ

տեղական եկամուտներ` 11530,1 մլն դրամ

ֆոնդային բյուջե` 13641,3 մլն դրամ:

Տեղական եկամուտները և կատարողականը ըստ հարկատեսակների

Հարկատեսակները	Պլանով նախատեսված	Կատարվել է	%
Հողի հարկ	1251,3	1050,02	84,4%
Գույքահարկ	7892,9	5794,2	73%
Վարձավճար	786,0	755,4	96%
Տեղական տուրք	264,6	266	100%
ՆՈՒՀ ՀՈԱԿ	670	410	69%
Աղբահանություն	665	541	90%
Այլ եկամուտներ	-	10	
Ընդամենը եկամուտ	11530,1	8952,0	77,6%

Ընդամենը հավաքագրումը կատարվել է 77,6%

Քանի որ մեր համայնքի սեփականաշնորհման վարելահողերը շատ սակավ են եղել, ուստի յուրաքանչյուր ընտանիքի հողի չափաբաժինը սեփականաշնորհվել է քիչ չափաբաժնով, որից ստացված բերքը չի ապահովում ընտանիքի եկամուտը: Այդ իսկ պատճառով համայնքի բնակչությունը մեծամասամբ մեկնում է արտագնա աշխատանքի, սակայն 2020թ-ին բոլորիս պարզ պատճառով բնակիչները չեն կարողացել մեկնել արտագնա աշխատանքի և հայտնվել են տնտեսապես ծանր վիճակում, մյուս կողմից էլ պատերազմը, որ ժողովրդին մատնեց հուսահատության: Իմ աշխատած տարիների ընթացքում սա առաջին դեպքն էր, որ համայնքը չկարողացավ հատել եկամուտների հավաքագրման 100%-ի շեմը:

Այժմ մեր աշխատակազմով ջանք ու եռանդ չենք խնայելու հավաքագրումը բարձր մակարդակի հասցնելու համար:

2020թ-ի ընթացքում կատարվել է հետևյալ աշխատանքները.

Սուբվենցիոն ծրագրով 758 գծամետր ներհամայնքային ճանապարհների սալարկում

համայնքի ներդրումը՝ 45% -11915.0 դրամ, պետության միջոցներից՝ 55% - 14562.0

Համայնքի բյուջեի միջոցներով մեկ թաղամասի լուսավորություն

Համայնքի դպրոցին ընթացիկ դրամաշնորհ 500.0դրամ

Համայնքի ՆՈՒՀ ՀՈԿ-ին ընթացիկ դրամաշնորհ 8250.0 դրամ

Հարազատին կորցրած 13 ընտանիքների տրամադրվել է 390.0 դրամ

Սոցիալապես անապահով 12 ընտանիքի տրամադրվել է 355.0 դրամ

Նորածին ունեցած 14 երիտասարդ մայրերի որպես խրախուսանք տրամադրվել է 150.0 դրամ

Ժամկետային զինձառայողների 12 ընտանիքներին տրամադրվել է 240,0 դրամ

2020թ-ին իմ կողմից կայացվել է 80 որոշում, տրվել է 19 կարգադրություն:

2020թ-ին համայնքի ավագանու կողմից կայացվել է 15 նիստ, 65 որոշում:

2021թ-ին նախատեսել ենք համայնքի երկու փողոցի մասնակի լուսավորություն, սուբվենցիոն ծրագրով 6 փողոցի մասնակի սալարկում:

Ունենք այնպիսի ծրագրեր որոնք համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել:

Խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարում:

Դպրոցի սպորտդահլիճի կառուցում:

2017-2021թթ համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարումը, դպրոցի սպորտդահլիճի կառուցումը համայնքի բյուջեի միջոցների հաշվին հնարավոր չէ իրականացնել: Դահլիճի բացակայության պատճառով երեխաները զրկված են մարզվելու հնարավորությունից:

Խմելու ջրի համար բազմաթիվ անգամ հակահամաճարակային տեսչության կողմից համայնքի խմելու ջրից նմուշները վերցրել են և ստուգումների արդյունքում պարզել են, որ ջուրը չի համապատասխանում խմելու ջրի նորմերին: Ես էլ իմ հերթին հայտարարություն եմ անում բնակչությանը, որ ջուրը եռացնելուց հետո օգտագործել, սակայն դա հնարավոր չէ: Դիմել եմ մարզպետարան և <<Լոռու ջրմուղ>> ՓԲ Ընկերությանը: ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության կոմիտեին խնդրել, որ Լեռնապատ-ջրաղբյուրից Վանաձոր քաղաքի Տարոն թաղամասը սնուցող ջրագծի

ջրամբարից ջրաֆիկացնել նաև Բագում համայնքը: Սակայն ստացել ենք պատասխան, որ Բագում համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1580մ նիշի վրա, իսկ իմ կողմից նշված Վանաձոր քաղաքի թաղամասերը սնուցող Լեռնապատ-ջրաղբյուրը 1514մ նիշի վրա:

Հայ-գերմանական ֆինանսական համագործակցության ծրագրով կառուցված սնուցման համակարգը Լեռնապատ ջրաղբյուրից Վանաձոր քաղաքի Տարոն թաղամասերը, Քիմ գործարանի թաղամասը հաշվարկված է ըստ առկա սպառողների այսպիսով գյուղի ջրամատակարարումը հնարավոր չէ իրականացնել նույնիսկ մղման եղանակով ջրի սղության պատճառով:

Խնդիրը ներկայացրել ենք մարզպետարան, դիմել ենք Վիոլա ջուր ընկերությանը պատասխանել է, որ հնարավորությունը միայն Հոբարձի համայնքի ջրագծից է, որ հնարավոր է համայնքը ջրաֆիկացնել: Այն էլ կապված է մեծ ծախսերի հետ, որի համար անհրաժեշտ է ներդրողներ: Համայնքի բնակչության 50%-ը կենցաղային պայմանների համար օգտվում է գետի ջրից, ոմանք էլ հարմար ժամերի ջուր են վերձնում նաև խմելու համար: Աստված մի արասցե, որ համաճարակ բռնկվի դա սպասելի է, քանի որ ամռանը հանգստացողներ են գալիս կազմակերպում միջոցառումներ և ամեն տեսակի աղբ լցնում են գետը աղտոտելով այն, որը և կառաջացնի անցանկալի երևույթներ:

Համայնքում ունենք 20 ընտանիք, որոնք բնակվում են վաղեմությունը անցած փայտյա խարիսկված հանրակացարաններում, որոնց խնդիրը նույնպես համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ լուծել: Այդ ընտանիքներից ոչ ոք 1988թ-ի երկրաշարժի ժամանակ տուն չի կորցրել, որ գոնե դիմենք կառավարությանը ինչ որ կարգավիճակ ձեռք բերելու համար: Այդ ընտանիքների հարցը Ֆսում է անորոշ, նրանք սոցիալապես անապահով ընտանիքներ են և ի վիճակի չեն լքել շենքը, այլապես կՖսան դրսում: